ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:




Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**«Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի համար
բեռնատար մեքենայի ներմուծում»**

ԾՐԱԳԻՐ

1. Ծրագրի նպատակը	Մի շարք շինարարական մասնագիտություններ ձեռքբերելու համար նախատեսված հատուկ արհեստանոցներում գործնական պրակտիկայի իրականացման ժամանակ օգտագործվող շինանյութի տեղափոխման անհրաժեշտությունից ելնելով, ապահովել Եզնիկ Մոզյանի ուսումնարանը բեռնատար մեքենայով: Ուսուցումն անցկացվում է բացառապես անվճար հիմունքներով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից
3. Բարեգործը	Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/
4. Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Կառնեգի պող. N 3, ՀՎՀՀ՝ 02507456)
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի «Անհրապշտություն» Շուշի քաղաք, կրթության բնագավառ




2

6. Ծրագրի բյուջեն	Բյուջեն կազմում է 11.960.000,00 ՀՀ դրամ:
7. Բարեգործություն ստացողը	Շուշի քաղաքի «Եզնիկ Մոզյան արհեստագործական ուսումնարան» հիմնադրամի ուսանողները
8. Ծրագրի իրականացման տևողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ. յուլիսի 01-ից մինչև 2017թ. դեկտեմբերի 27-ը
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Մույն թվականի նոյեմբերի 02-ից մինչև դեկտեմբերի 27-ը ընկած ժամանակահատվածում բեռնատար մեքենայի ձեռքբերում, ներմուծում, տեղափոխում և նվիրաբերում՝ 11.960.000,00 ՀՀ դրամ արժեքով:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Ford Tranzit VAN RWD 470 LWB EF» մակնիշի թվով մեկ հատ «Frozen White» գույնի ավտոմեքենայի ձեռքբերում, ներմուծում և անհատույց հանձնում՝ 11.960.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն ԱՀ կառավարության հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ):

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Գարբինյանը





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2017 թվականի N Մ -969 - Ա

քաղ. երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 01.1/14-2/20445-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նոյեմբերի 10-ի N 06/3-8/46594-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի «Տիրամայր Նարեկ» հիվանդանոցի կոմպյուտերային տոմոգրաֆի համար, «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված երկու հատ հոսանքի կարգավորիչի (0.6 կգ ընդհանուր քաշով, 8 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 100 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԾԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ- 970 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԽԱՐԲԵՐԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ
ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 01.1/14-2/20103-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԳ/ԱՆՄ-2-1/11606-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 06/3-8/45663-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ու մ է .**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից Պերկինս միջազգային կույրերի դպրոցի կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված Բրայլի սարքերը (կույրերի գրելու համար, 10 հատ, 75 կգ քաշով, 6,900 ԱՄՆ-ի դոլար արժեքով, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 891 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Ստացված սարքերից երկուսը հանձնվելու են «Քեզ համար» հասարակական կազմակերպությանը:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի ձևակերպումն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՏ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

01.11.2017р.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2017 թվականի N Մ - 972 - Ա

քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 01.1/14-2/19993-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 11-ի N 06/3-8/45801-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**


1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ֆրոնտոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558693) 2017 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված՝ N 1959-290917 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կազմակերպել, ղեկավարել և վերահսկել շինարարական աշխատանքների նկատմամբ հեղինակային և տեխնիկական հսկողության գործընթացը և որակը՝ 29,371,970 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


2) Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09806674) 2017 թվականի հոկտեմբերի 26-ին կնքված՝ N 1987-161017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 195,402,545 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Այս որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-973 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N Մ-597-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Ծնողագուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան»
բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հաշվի առնելով «Ծնողագուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-
Հայաստան» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի նոյեմբերի 8-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 14-ի «Ծնողագուրկ հայ երեխաների
օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից
իրականացվող «Հատուկ սարքավորումների, պարագաների տրամադրում երեխաների
խնամքի և պաշտպանության հաստատություններին» ծրագրի մասին» N Մ-597-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2017
թվականի դեկտեմբերի 30-ը:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԸ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 13,509,900 դրամ: Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 30-ը:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Ստագ» ՍՊԸ Ընկերության կողմից ասֆալտապատման աշխատանքների իրականացում – 1,766 քմ՝ 13,509,900 դրամի չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն՝ Տաշիրի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-975-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/14-2/19849-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 06/3-8/45074-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 3-ի N Ն2/22.2/13703-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Direct Relief» միջազգային կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համար Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղի (մեկ տեղ, 41 կգ ընդհանուր քաշով, 49,790 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,041.75 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄԿ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-976-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-261-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի հոկտեմբերի 30-ի N 01.1/14-2/19655-17 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի
N 06/3-8/44444-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից ձեռք բերված տրակտորի հիդրավլիկ հավաքածուն (մեկ տեղ, 13 կգ ընդ-
հանուր քաշով, 300 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ
փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվա-
կանի ապրիլի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միու-
թյան կողմից իրականացվող «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի
զարգացմանը» ծրագրի մասին» N Մ-261-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի
դեկտեմբերի 23-ի N Մ-1222-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-977-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի N Մ-714-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/14-2/19734-17 և Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի
N 06/3-8/44430-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկի սոսիսնձը (մեկ տեղ, 487 կգ ընդ-
հանուր քաշով, 4,818 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փո-
խադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվա-
կանի սեպտեմբերի 8-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց
միության կողմից իրականացվող «Սիսիանի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի
կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-714-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԻՐ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-978-Ա
քաղ. երևան**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 01.1/4-2/19890-17, Հայաստանի Հանրապետության կառավարության առջև թեր պեկական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 06/3-8/45017-17 ու Հայաստանի Հանրապետության աշխարհային և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի նոյեմբերի 3-ի N ԱԳ/ԱՄԲ-2-1/1392-17 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (մակարոնային արտադրանք՝ 48,000 տոնի, 1,636,800 ռուսական ռուբլու համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1211-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում (բաշխման ցանկերը կցվում են):

2. Սույն որոշումն ուժի է մտնում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տնտեսական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնակավայրերի, ենթակառուցվածքի և տրանսպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարարություն, Հայաստանի Հանրապետության արհմիութենական կենտրոնները, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետներին:



ՆԱԽԱԳԱ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ընդհանուր քանակ

Ինվոյս N 5 18.10.2017

№	Ապրանքի անվանումը	Հախառնվող ըստ մարզերի	Հախառնների քանակը	Հախառններին բաշխվող քանակը (տոսկով)	Արժեքը ըստ գրանցների (տոսկով)
1	Ապակադրոմային արտադրանք	Գեղարքունիքի մարզ	Գեղիկ Այգուտ Սարտուճի Դարբասկ Կահան Կալվական Բարեպատ Չորականք Լճաշեն Արծրք Ճամբարակ Ամրատաննե Գավառ Թռուցուր 138 138 68 59 172 22 264 22 46 43 152 12 18 128	1656 1656 816 708 2064 264 60 264 598 516 1824 144 216 1664	53.526 53.526 26.375 22.884 66.713 8.533 1.939 8.533 17.842 16.678 58.956 4.654 6.982 49.647
		Արմավիրի մարզ	Ալաշկերտ Գեղամկերտ Մոտաշալ Վեդի 10 50 10	300 684 600 120	9.697 22.108 19.393 3.879
		Արարատի մարզ	Կոտայատ Գետազատ Կարդաշեն 17 14 1	204 154 12	6.594 5.430 388
		Արտաշի մարզ	Յարենցական Սաթերի 50 18	600 216	3.879 6.982
		Արտաշի մարզ	Արտաշի Կամանոր 30 42	19.393 504	7.757 11.636
		Արտաշի մարզ	Թալին Արցուն 33 20	504 396	16.290 12.800
		Տավուշի մարզ	Բցկան 2800	240	7.757
		Երևան	30800	1.086.028	
	Ընդամենը	48000	1.635.800		

«Ղիպակոնիխ» բարեգործական հիմնադրամի տնօրեն

1417.8



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-979-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-1291-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 01.1/14-2/20170-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 06/3-8/45008-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 4-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ալավերդի քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1291-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1226-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄԱԳ - Էլեկտրոն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07203241) 2017 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մետաղապլաստից դռների և պատուհանների պատրաստման ու տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,502,350 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-980-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1411-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/14-2/19711-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/44768-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Իջևան քաղաքում նոր մանկապարտեզի շենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1411-Ա որոշմամբ հաստատված (2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1227-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քարարտ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07612154) 2017 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հղկված երեսպատման ֆելզիտե սալիկների ձեռքբերում՝ 1,302,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-981-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄ-
ԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 01.1/14-2/20102-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/44818-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-732-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Թորոսյան և Թորոսյան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02228847) 2017 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լողավազանի կառուցման աշխատանքների իրականացում՝ 11,030,754 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-982-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
2-Ի N Մ-476-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄ-
ԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/14-2/19733-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 06/3-8/44431-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Տաշիր» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի հոկտեմբերի 24-ի N 064 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին չիրկիզվող պահարանների նվիրատվություն» ծրագրի մասին» N Մ-476-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2017 թվականի հոկտեմբերի 31-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-983-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄ-
ԲԵՐԻ 29-Ի N Մ-850-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն**

(«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/14-2/19736-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 06/3-8/44426-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի 2017 թվականի հոկտեմբերի 23-ի N 660 գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» N Մ-850-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «34 տեղ, 5,577 կգ ընդհանուր քաշով, 445,275.05 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «33 տեղ, 5,560 կգ ընդհանուր քաշով, 438,846.89 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով:

2) որոշմանը կից **«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի** նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշման հիման վրա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**«ՀԱՅԱՍՏԱՆ-ՄՐՁԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ
ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ**

ՀԱՀ 089

Հ/Հ	Դոնոր	Նկարագրություն	Ստացող	Կոդ	Արկղ	Քաշ (kg)	Արժեք (ԱՄՆ դոլար)
1	Հայաստան - Արցախ հիմնադրամ (ՀԱԿԻԲ)	Դեղեր	Ալյուրյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն	SC 089-01	6	1,454.00	322,890.55
2	Հայաստան - Արցախ հիմնադրամ (ՀԱԿԻԲ)	Բժշկական արտադրանքներ	Ալյուրյան Լ. - ՀՀ առողջապահության նախարարություն	SC 089-02	23	9,679.00	109,820.98
3	Հայաստան - Արցախ հիմնադրամ (ՀԱԿԻԲ)	Բժշկական արտադրանքներ	Ավետիսյան Կ. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	SC NKR 089-03	3	1,122.00	4,575.36
4	Հայաստան - Արցախ հիմնադրամ (ՀԱԿԻԲ)	Դեղեր	Ավետիսյան Կ. - ՀՀ-ում ԼՂՀ ներկայացուցչություն	SC NKR 089-04	1	11.00	1,560.00
Ընդամենը							438,846.89



14/9.3



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-984-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 8-ի N 01.1/14-2/20354-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 10-ի N 06/3-8/46584-17 եզրակացությունները, որ ո շ ու մ է.

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված 60 հատ դռան այցեքարտը, 8 հատ տեսախցիկն՝ իր պիտույքներով, և 3 հատ կտրիչը (46.95 կգ ընդհանուր քաշով, 5,740.18 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 484.53 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սահմանել, որ ամերիկյան «CyArk» ոչ առևտրային կազմակերպության կողմից «Սիմոնյան» կրթական հիմնադրամի հասցեով անհատույց ուղարկված սկաները, կանգնակը և սնուցող սարքը (2 տեղ, 12 կգ ընդհանուր քաշով, 23,330 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 2,231.03 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-985-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի նոյեմբերի 7-ի N 01.1/14-2/20212-17 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 06/3-
8/45408-17 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է:**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն
կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմ-
նադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ»
ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի
N Մ-731-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն
զգալի նշանակություն՝

1) Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Աննա Բեռնալի հետ (անձնագիր՝ 71
1419473) 2017 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված՝ N 01-11.10.17 պայմանագրում նշված
գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝
450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի Ջենաթ Բաստավալայի հետ (անձնա-
գիր՝ J3770318) 2017 թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N 01-12.10.17 պայմանագրում
նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատու-
ցում՝ 870,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) Հունաստանի Հանրապետության քաղաքացի Զեորջիոս Քերի Սիմոսի հետ
(անձնագիր՝ AN3222098) 2017 թվականի հոկտեմբերի 13-ին կնքված՝ N 01-13.10.17 պայմա-
նագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների
մատուցում՝ 440,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-986-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱ-
ԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2017 թվականի նոյեմբերի 9-ի N 01.1/14-2/20447-17 և Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 9-ի
N 06/3-8/46247-17 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672)
կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն
կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմ-
նադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ»
ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի
N Մ-731-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն
զգալի նշանակություն՝

1) Ճապոնիայի քաղաքացի Սայումի Յուկույիի հետ (անձնագիր՝ TZ0543931) 2017 թվա-
կանի սեպտեմբերի 25-ին կնքված՝ N 01-25.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,750,000 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Լիբանանի Հանրապետության քաղաքացի Էլի Մուհաննաի հետ (անձնագիր՝ LR
0587058) 2017 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ N 01-28.09.17 պայմանագրում
նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատու-
ցում՝ 1,140,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2

3) ԱՄՆ-ի քաղաքացի Սինտիա Մերիեջի հետ (անձնագիր՝ 561164798) 2017 թվականի
սեպտեմբերի 28-ին կնքված՝ N 02-28.09.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախա-
տեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 950,000 դրամի չափով,
առանց ավելացված արժեքի հարկի.


4) ԱՄՆ-ի քաղաքացի Ուիլյամ Կլինգենմայերի հետ (անձնագիր՝ 504499781) 2017
թվականի հոկտեմբերի 12-ին կնքված՝ N 02-12.10.17 պայմանագրում նշված գործարքը,
որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,415,000
դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ալի Էսլամի հետ (անձնագիր՝
Z37719402) 2017 թվականի նոյեմբերի 2-ին կնքված՝ N 01-02.11.17 պայմանագրում նշված
գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝
400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) ԱՄՆ-ի քաղաքացի Քամի Լեբարեդյանի հետ (անձնագիր՝ 534530039) 2017 թվա-
կանի նոյեմբերի 3-ին կնքված՝ N 01-03.11.17 պայմանագրում նշված գործարքը, որով
նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 460,000 դրամի
չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Ռեդ-փոնթ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03312103) 2017 թվականի հոկտեմբերի 31-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխա-
տանքների իրականացում՝ 110,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ Մ Ա Ն
10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-987-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-272-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՃ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵ-
ԼՈՒ ՄԱՍԻՆ («Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահ-
պանության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 11-ի N 5/08.2/52062-17
գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017
թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/14-2/19788 -17 ու Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 1-ի
N 06/3-8/44599-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Ն է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության
բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսքովի
անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված դրամաշնորհի
պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագրի մասին» N Մ-272-Ա
որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համա-կարգման հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 12-ի N Մ-404-Ա որոշման
խմբագրությամբ) հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաս-
տանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրա-
պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի
Հանրապետության Արարչության մարմնին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՄԻՄՈՆՅԱՆ



Հ Ա Ս Տ Ա Տ Ա Մ Ե



Ծ Ր Ա Գ Ր

ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի
միջև 2015 թ. մարտի 31-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի

1.	Ծրագրի նպատակը	«Խոսքովի անտառ» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակադրված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններին
3.	Բարեգործը	Կովկասի բնության հիմնադրամ, Թուրքիայի Հանրապետության 18, 63067 Օֆիսերախ, Գերմանիա
4.	Ծրագրի կատարողը	ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արարատի մարզ, ք. Վեդի
6.	Ծրագրի բյուջեն	«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» Կովկասի բնության հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Ալբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ում բացված հատուկ հաշվում՝ 63 761 400 ՀՀ դրամ : Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 10-ի:
7.	Բարեգործություն ստացողը	«Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ, Արարատի մարզ, ք. Վեդի 10.03.2017թ. - 31.12.2017թ.
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015թ.
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագիր՝ 10.03.2017թ. - 31.12.2017թ. - 63 761 400 ՀՀ դրամ, այդ թվում՝

1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (2-րդ,3-րդ եռամսյակ) – 12 832,8 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝


Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ անակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Բենզին «Ռեզուլյար»	լիտր	18020	5 177,7
Դիզելային վառելիք	լիտր	5520	1 759,8
Սեղմված բնական գազ	լսմ	2200	4 400,0
Հակասառիչ հեղուկ	լիտր	100	33,3
Կուտակիչ մարտկոցներ	հատ	7	210,0
Ավտոմեքենաների անիվներ	հատ	20	520,0
Ավտոմեքենաների անիվներ	հատ	8	208,0
Ավտոմեքենաների անիվներ	հատ	4	324,0
Անիվների շղթաներ	հատ	8	200,0

2. Գրասենյակային ապրանքներ և վարչական սարքավորումների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – 1 447,4 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Պաշտպանիչ և անվտանգության հագուստ	դրամ	1	700,0
Քարտարանային պահարաններ	հատ	1	623,3
Բազկաթոռ	հատ	1	124,1

3. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – 2 648,0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Կապիտալներ	հատ	3	854,0
Կապիտալներ	հատ	3	1 047,0
Կապիտալներ	հատ	3	747,0



4. Ծառայությունների ձեռքբերում (1-4-րդ եռամսյակ) – 11 282,0 հազ. ՀՀ դրամ, այդ թվում՝

Գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների անվանումները	Չափի միավորը	Ամբողջ քանակը (ծավալը)	Ընդհանուր գումարը (հազար դրամով)
Էլեկտրաէներգիա	դրամ	1	2 150,0
Գազամատակարարում	դրամ	1	1 000,0
Միջազգային եւ միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ	դրամ	1	700,0
Համացանց	դրամ	1	190,0
Դոմենային անվանումներ	դրամ	1	12,0
Վեբ հոսթինգ	դրամ	1	30,0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	դրամ	1	5000,0
Նավիգացիոն ծառայություն	դրամ	1	700,0
Տեսագրման սարքերի տեղադրման ծառայություններ	դրամ	1	500,0
Կոմունալ ծառայություններ	դրամ	1	200,0
Անասնաբուժական ծառայություններ	դրամ	1	800,0


5. «Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում, յուրաքանչյուր եռամսյակ) – 35 551,2 հազ. ՀՀ դրամ:

10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը

1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (գործարքի շրջանակներում) ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 12 832,8 հազ. ՀՀ դրամ,
2. Վարչական սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում) ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) – 1 447,4 հազ. ՀՀ դրամ:
3. Այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերում (գործարքի շրջանակներում) ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից


		ազատում) - 2 648,0 հազ. ՀՀ դրամ, 4. Ծառայությունների ծեռքերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում) - 11 282,0 հազ. ՀՀ դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	1. Գրասենյակային ապրանքներ /Բազկաթոռ/ - 124,1 ՀՀ դրամ 2. Գրասենյակային ապրանքներ /Դյուրակիր համակարգիչներ և տպիչ սարքեր/ - 1 794,0 ՀՀ դրամ 3. Կոմունալ ծախսեր - 4 282,0 ՀՀ դրամ • Էլեկտրաէներգիա - 2 150,0 • Գազամատակարարում - 1 000,0 • Միջազգային եւ միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ - 700,0 ՀՀ դրամ • Համացանց - 190,0 ՀՀ դրամ • Դոմենային անվանումներ - 12,0 ՀՀ դրամ • Վեբ հոսթինգ - 30,0 ՀՀ դրամ • Կոմունալ ծառայություններ - 200,0 ՀՀ դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և ՀՀ Արարատի մարզպետարանի հետ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը

«Խոսքովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի տնօրեն



Հ. Հովակիմյան

G. Hovakimyan





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-988- Ա

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-040-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Օրրան»
բարեգործական հասարակական կազմակերպություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական
կազմակերպության 2017 թվականի հոկտեմբերի 12-ի գրությունը ու Հայաստանի Հանրա-
պետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 23-ի N 01.1/
14-2/19140-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի հոկտեմբերի 20-ի N 06/3-8/42662-17 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Օրրան» օգնություն
կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-040-Ա որոշմամբ հաստատված
ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝


1) որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 6-րդ ենթակետում «4,000,000» թիվը
փոխարինել «3,276,000» թվով.

2) ծրագրի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր ենթակետով.

27	10.10.17	N 1-10/17	«Տիգրան Մեծ» ՓԲԸ	Բույլետների և թերթերի տպագրություն	724,000
----	----------	-----------	------------------	------------------------------------	---------

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-989- Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբու-
ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆի-
նանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/14-2/18978-17,
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի
հոկտեմբերի 20-ի N Ն2/22.2/13112-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի
N 06/3-8/44429-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բա-
րեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախա-
գիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական վիրա-
հատական պարագաներ՝ 1 տեղ, 2,27 կգ ընդհանուր քաշով, 819 ԱՄՆ-ի դոլարին հա-
մարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-
վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարե-
գործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի
«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրա-
կանացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշ-
մամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱԾ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**


**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-990- Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբու-
ժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (1)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆի-
նանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/14-2/19681-17,
Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի
նոյեմբերի 7-ի N Ն2/22.2/13891-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 06/3-
8/44428-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բա-
րեգործական գրասենյակի կողմից, որպես նվիրաբերություն, «Հայկական ակնաբուժու-
թյան նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (դեղորայք՝
1 տեղ, 5,44 կգ ընդհանուր քաշով, 1,280.70 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝
ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության
նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքե-
րին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-991- Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԶԻԱՀ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՄԱԳՆԱԿԱՆ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 01.1/14-2/19682-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2016 թվականի հոկտեմբերի 31-ի N Ն2/22.2/13494-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/44606-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է:**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի (Ռ-Դ ՀԿԳԻ) կողմից, որպես նվիրաբերություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով Ռ-Դ Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականի դեկտեմբերի 15-ին ստորագրված ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի հակազդմանն ուղղված նյութատեխնիկական աջակցության պայմանագրի շրջանակներում ստացված բեռի (թժշկական նշանակության ապրանքներ և ձևաթղթեր հետազոտությունների իրականացման համար՝ 106,927.81 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպության մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներդրացնել ամբողջ կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:




ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՑԱՆԿ

«ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին Ռ-Դ Ռոսպոտրեբնադզորի Համաճարակաբանության կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտի կողմից որպես նվիրաբերություն տրամադրված բեռի

#	Անվանում	ԱՏԳԱԱ ծածկագիր	Քանակ	Գումար /ռուբլի/
1	Транспортная среда с муколитиком, 0,5 мл/ Сրանսպորտային միջավայր մուկոլիտիկով, 0.5 մլ	3821000000	100 шт	45 214,00
2	Транспортная пробирка из пластика, 2,0мл/ Сրանսպորտային փորձանոթ (պլաստիկ), 2.0 մլ	9018905009	200 шт	312,00
3	Перчатки латексные, размер S/ Լատեքսային ձեռնոցներ, չափը S	4015190000	200 шт	972,00
4	Перчатки латексные, размер M Ձեռնոցներ լատեքսից, չափը M	4015190000	200 шт	972,00
5	Одноразовая простынь / Մեկանգամյա օգտագործման ծածկոց	6307909200	1 рулон	609,09
6	Стекло предметное 75*25*1,8мм/ Առարկայական ապակի 75*25*1,8 մմ	7007212001	200 шт	576,00
7	Жгут венозный взрослый 400*25мм Լարան երակային մեծահասակի, 400*25մմ	5502001000	4 шт	272,72
8	Информированные согласия /Տեղեկացված համաձայնությքն թերթիկներ	4911 99 000 0	210 шт	
9	Протокол исследования на русском языке / Շետազոտության արձանագրություն ռուսերեն	4911 99 000 0	4 шт	58 000,00
10	Протокол исследования на армянском языке/ Շետազոտության արձանագրություն հայերեն	4911 99 000 0	4 шт	



477/4


11	Анкеты для женщин на армянском языке/ Հարցաշարներ կանանց համար	4911 99 000 0	150 шт	
	Ընդամենը			106 927,81

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱՆ

Երևան

ԱՐԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

Դավիթ Բեկ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-992- Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի N Մ-930-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**


**(Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ
(WWF-Armenia))**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 01.1/14-2/19794-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի N 06/3-8/44433-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ռուսաստանի Դաշնությունից Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից ձեռք բերված և ներմուծված բեռը (1 տեղ, «UAZ Pickup» մակնիշի ավտոմեքենա, նույնականացման N XTT236320H1017213, 733,050.85 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 803,942 դրամ, «Արարատյան» մաքսատու-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի օգոստոսի 28-ի «Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հարավային Կովկասի (Հայաստան) էկոլոգիական միջանցքներում կենսաբազմազանության պահպանության համայնքային մոդելների ստեղծում» ծրագրի մասին» N Մ-930-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի N Մ-501-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-993- Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄ-
ԲԵՐԻ 20-Ի N Մ-929-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի պատանեկան նվաճումներ»
հասարակական կազմակերպություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 01.1/14-2/20144-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 06/3-8/45436-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Հայաստանի պատանեկան նվաճումներ» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 20-ի «Տեխնոլոգիա» առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթության և 10-րդ ու 11-րդ դասարանների «Ձեռնարկատիրություն» առարկաների փորձնական ծրագրերի իրականացում» բարեգործական կրթական ծրագրի մասին» N Մ-929-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02505322) 2017 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված՝ N 2-10/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասագրքերի, ուսումնական ձեռնարկների տպագրում՝ 9,793,243 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱԾ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ ՈՒ Մ
10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-994- Ա
քաղ. երևան

**ԱՄՆ-Ի «ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ԳՅՈՒՂԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐԳՈՒՄ»
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 01.1/14-2/20143-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 02/14/19693-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 06/3-8/45037-17 և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 01/04/4597-17 եզրակացությունները, **ո Ր Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան, Սայաթ Նովա 19, «Անի պլազա» հյուրանոց, 2-րդ սենյակ, ՀՎՀՀ՝ 01542952) կողմից 2017 թվականին իրականացվող՝ 31,299,073 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղի դպրոցի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):


2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լեգենդա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04406774) 2018 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված՝ պայմանագրին կից նախահաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի նոյեմբերի 30-ից մինչև 2018 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղի դպրոցի վերանորոգում՝ 31,299,073 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայ կրթական հիմնարկություն» Հայաստանի մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառա-

վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:




Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղի դպրոցի վերանորոգման Ծրագիր

1.	Ծրագրի նպատակը	ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղի դպրոցի վերանորոգում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից:
3.	Բարեգործը	ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնարկություն» 600 West Broadway, Suite 130 Glendale, CA 91204 (818) 242-4154
4.	Ծրագիրը կատարողը	ԱՄՆ «Հայ Կրթական Հիմնարկություն» ՀՀ մասնաճյուղ (ՀՀ, Բ. Երևան, Մայաթ Նովա 19, ԱՆԻ Պլազա Հյուրանոց, 2-րդ սենյակ, ՀՎՀՀ 01542952) Հեռ. 011 53-14-85, 093 575 474
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Արևադաշտ, Գևորգ Զառչի թաղամաս 1: Կրթության բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	31,299,073 ՀՀ դրամ
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ գյուղական համայնք
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2017 թ. նոյեմբերի 30-ից 2018 թ. Յուլի 31

2



9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման համար առանձին փուլեր չեն նախատեսվում: Վճարումը կատարվում է Հայ Կրթական Հիմնարկության ՀՀ մասնաճյուղի կողմից: Ծինարարությունն իրականացնելու է Արմավիրի մարզում գործող «Լեզենդա» ՄՊԸ-ն: Ծրագրի արժեքն է 31,299,073 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի): Ծինարարության տեխնիկական վերահսկողությունն իրականացվելու է Թաթևի Վարդանյան ԱԶ-ի կողմից, որը վճարվելու է ՀՀ մասնաճյուղի գրասենյակի բյուջեից:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Նախատեսվում է ամբողջովին վերանորոգել Արևադաշտ համայնքի դպրոցը: «Լեզենդա» ՄՊԸ-ն համաձայն հոկտեմբերի 18-ի ստորագրված պայմանագրի կատարելու է մեկ հարկանի դպրոցի նորոգման, պատերի ամրացման, նոր տանիքի, դռների, պատուհանների ձեռքբերման և տեղադրման, սանհանգույցի կառուցման և պայմանագրից բխող նախահաշվային արժեքին համապատասխան 31,299,073 ՀՀ դրամի աշխատանք՝ առանց ԱԱՀ 20 %-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցելու ենք ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Կրթության և Գիտության նախարարության, Արմավիրի մարզի կրթության վարչության և Արևադաշտի համայնքի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է ԱՄՆ-ի Հայ Կրթական Հիմնարկության բարերարների խորհրդի ներկայացուցիչը (խորհրդին ներկայացնելով ամփոփ հաշվետվություններ), ՀՀ-ում մասնաճյուղի տնօրինությունը, ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնելով (եռամսյակային և ամփոփ հաշվետվություններ):





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
10 նոյեմբերի 2017 թվականի N Մ -995- Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱ-
ՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (Ամերիկայի հայ ավետարանչական
ընկերակցություն)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 01.1/14-2/19994-17 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017
թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/44739-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախա-
տեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառա-
վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի
հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից
2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ
հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սպեկտոր-15» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00145351) 2017 թվականի հոկտեմբերի 15-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևան քաղաքի Բաղ-
րամյան 18 հասցեում գտնվող ընկերության կենտրոնական գրասենյակի ջրի արտահոսքի
դադարեցման վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 16,792,320 դրամի չափով՝
առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
10 նոյեմբեր 2017 թվականի N Մ -996- Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 13-Ի N Մ-1469-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (1)**
(Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N01.1/14-2/19955-17 և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017
թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/44769-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի
մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 00032803) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախա-
տեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառա-
վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի
հունվարի 13-ի «Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի կողմից
2016-2021 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-1469-Ա որոշմամբ հաս-
տատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեթրին Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01519154) 2017 թվականի հոկտեմբերի 11-ին
կնքված N 089/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական
սննդի ձեռքբերում՝ 33,551,100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ- 997 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
«ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 6-ի N 01.1/14-2/20100-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 02/14/19796-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 3-ի N 06/3-8/45039-17 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 69,646,200 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն գզայի նշանակություն՝


1) «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529053) 2017 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված՝ N 11Ը/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ավտոտնտեսության շենքի կից տարածքի ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 9,451,860 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529053) 2017 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված՝ N 12Ը/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կից տարածքի ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 30,949,470 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Վահագն և Սամվել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529053) 2017 թվականի հոկտեմբերի 24-ին կնքված՝ N 13Ը/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Էօրենեկան վարժարանի կից տարածքի ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 29,244,870 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի բարեկարգում

Մ Ր Ա Գ Ի Բ

13.	Օրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Օրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն:
-----	---	---



1.	Օրագրի նպատակը	Օրագրի նպատակն է Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի տարածքում գտնվող Ավտոտնտեսության շենքի կից, «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կից և Էօրենեկան վարժարանին կից տարածքների ասֆալտապատումը :
2.	Օրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Օրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5.	Օրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եկեղեցաշինական:
6.	Օրագրի բյուջեն	69.646.200 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Օրագրի իրականացման տևողությունը	24 հոկտեմբեր, 2017 - 24 հոկտեմբեր, 2018թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Օրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է ասֆալտապատել Ավտոտնտեսության կից, «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կից և Էօրենեկան վարժարանին կից տարածքները , որի գումարը ըստ 11Ե/017 պայմանագրի կազմում է 9.451.860 ՀՀ դրամ, ըստ 12Ե/017 պայմանագրի 30.949.470 ՀՀ դրամ, ըստ 13Ե/017 պայմանագրի 29.244.870 ՀՀ դրամ: Երեք պայմանագրերի բյուջեն միասին կազմում է 69.646.200 ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Գառնա և Սամվել» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Վազգեն Սարգսյան 10/2/4 ՀՎՀՀ 01529053), պայմանագրեր կնքված 09.10.2017թ. 11Ե/017 , 12Ե/017, 13Ե/017: Օրագիրը նախատեսվում է իրականացնել 24 հոկտեմբեր, 2017 – 24 հոկտեմբեր, 2018 թ. :
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Նախատեսվում է ասֆալտապատել Ավտոտնտեսության կից, «Գարեգին Ա» կրթական կենտրոնի կից և Էօրենեկան վարժարանին կից տարածքները , որի ընդհանուր գումարը կազմում է 69.646.200 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11.	Օրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Էջմիածնի քաղաքապետարանի հետ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ- 998 - Ա
քաղ. երևան**

**ՄԱՅՐ ԱՔՈՒ ՍՈՒՐԵ ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱԳՎՈՂ
«ԳԱՐԵԳԻՆ Ա ԿՐԹԱԽԱՄԱԽԻՐԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 01.1/14-2/18991-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 23-ի N 02/14/18777-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 18 -ի N 06/3-8/42326-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 3,068,000 դրամ արժողությամբ «Գարեգին Ա կրթահամալիրի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ռայվերտի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801721) 2017 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված՝ N 079/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեխանիկական մեխանիզմով շերտավարագույրների և գալարավարագույրների մատակարարման, մոնտաժման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,068,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:


4. Սույն որոշումն առաջարկել Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՐ

Ա. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչապետական կառավարման
Ստորին կալվածքային տնտեսության
և հողմեքերի կոմիտեի 2017թ.



Գարիգին Ա կրթահամալիրի կահավորում

Շ Ր Ա Գ Ի Ր

1	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է Գարեգին Ա կրթահամալիրի միջանցքների ու սրահների համար ձեռք բերել շերտավարագույրներ և գալարավարագույրներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից:
3.	Բարեգործը (բարեգործները)	Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
4.	Ծրագրի կատարողը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401:
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եկեղեցաշինական:
6.	Ծրագրի բյուջեն	3.068.000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:
7.	Բարեգործություն ստացողը	Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	09 հոկտեմբեր, 2017 – 30 դեկտեմբեր, 2017թ.:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Գարեգին Ա կրթահամալիրի միջանցքների ու սրահների համար ձեռք բերել շերտավարագույրներ և գալարավարագույրներ , որի գումարը կազմում է 3.068.000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Աշխատանքները իրականացվելու է «Ռայվերտի» ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Տ. Մեծի 69, շին.27. ՀՎՀՀ 00801721), պայմանագիր կնքված 09.10.2017թ. 079/ 017: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 09 հոկտեմբեր, 2017 – 30 դեկտեմբեր, 2017 թ.:
10.	Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գները	Նախատեսվում է Գարեգին Ա կրթահամալիրի միջանցքների ու սրահների համար ձեռք բերել շերտավարագույրներ և գալարավարագույրներ , որի գումարը կազմում է 3.068.000 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Այլ ծախսեր նախատեսված չեն
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցություն Մշակույթի նախարարության և Էջմիածնի քաղաքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կարվի ամփոփ տեղեկություն:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ- 999 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N Մ-431-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 27-ի N 01.1/14-2/19575-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 30-ի N 06/3-8/44062-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մայիսի 5-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Սոցիալ-հոգեբանական աջակցություն երեխաներին և միայնակ փախստական ծերերին» ծրագրի մասին» N Մ-431-Ա որոշմամբ (2015 թվականի հունիսի 12-ի N Մ-612-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 690,224 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ- 1000 - Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի նոյեմբերի 2-ի N 01.1/14-2/19937-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի նոյեմբերի 1-ի N 06/3-8/44767-17 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա որոշմամբ (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սիֆիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի ձեռքբերում՝ 716,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղղված է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:

ՆԱԽԱԳԱԾ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**10 նոյեմբերի 2017 թվականի N Մ-1001 - Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հոկտեմբերի 27-ի N 01.1/14-2/19524-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հոկտեմբերի 27-ի N 06/3-8/43896-17 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

